

Критика и эстетика, М., 1979, с. 262-263: Եթէ Ի. Կիրենսկին քննարկում է խնդիրը արեւմտաեւրոպական ժողովուրդների պատմամշակութային զարգացման լայն ֆամատեքստում, ապա ժամանակակից հետազոտող Ֆ. Ֆոն Խալեմը դիտարկում է այն Իրաուցքի ֆա-

մատեքստում (տե՛ս Փրիդրիխ ֆոն Խալեմ, *Историко-правовые аспекты проблемы Восток-Запад*, "Вопросы философии", 2002, N 7, с. 2651):

67 Հ. Ղ. Ալիշան, *Արեւելք-Արեւմուտք*, «Բազմավեպ», 1851, թիւ 11, էջ 166:

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԻԱԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՍԱՆԱԳՐՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Յովհաննես Կարազեոզեան

Արեւելեան այլ օրէնագրքեր

ա) Եգիպտոս

Եգիպտոսի օրէնքները բազմազան եւ բազմաբնոյթ են: Նրանք հիմնականում վերաբերում են արքունական տաճարային բնագաւառներին՝ իրենց բազմաթիւ ենթաճիւղերով: Այնտեղ կարելի է հանդիպել ինչպէս թագադրութեան, այնպէս էլ ծիսական այլ բնոյթի օրէնքների, սովորական եւ մեծ յանցագործութիւնների վերաբերեալ նախատեսուած դատական վճիռների, տնտեսական տարբեր հարցերի վերաբերեալ կանոնների, որոնց ամբողջական ուսումնասիրութեամբ մեզանում զբաղուել է Իսիդոր Լուրիէն եւ հրատարակել ամբողջական մի մենագրութիւն¹:

Այդ օրէնքների մասին պատկերացում կազմելու համար բերենք մի քանի օրինակ: Այսպէս, եթէ տաճարի հովուին որեւէ մէկը գողանում եւ տանում է իր նախիրը կամ հօտը հովուելու, ապա այդ պիսի մարդուն բռնում են եւ հասցնում մահակի 100 հարուած եւ 5 վէրք²:

Կան նաեւ որդեգրման վերաբերեալ օրէնքներ՝ համապատասխան բոլոր կանոններով³:

Գերեզմանագողերին ցից են բարձրացնում⁴, իսկ կեղծ մեղադրանք յարուցողներին հասցնում են մահակի 100 լիածանր հարուած⁵:

բ) Շումեր, Աքադ

Շումերում յայտնի էին մի շարք օրէնքներ, որոնք կազմուած էին Ք.ա. III հազարամեակի վերջերին: Այսպէս, օրի-

նակ, մեզ են հասել Ուր-նամուխի (2112-2094) օրէնքները, որոնցից են հետեւեալ երկու յօդուածները. «Եթէ (մի) մարդ (մի ուրիշ) մարդու ձեռքը կամ ոտքը (որեւէ) գործիքով վնասի, ապա նա պարտաւոր է կշռել (=վճարել) 10 սիկլ (=8.4 գ) արծաթ»⁶: «Եթէ (մի) մարդ (որեւէ) գործիքով խփի (եւ) կոտրի (մի ուրիշ) մարդու ոսկորը, (ապա) նա պարտաւոր է կշռել (=վճարել) 1 մին (=500 գ) արծաթ»⁷:

Բաբելոնից Հիւսիս-արեւելք գտնուող մի փոքր պետութեան՝ էշնուննայի թագաւոր Բիլամայի օրէնքները, որ կազմուել են Ք.ա. XX դ., աւելի հին են, քան ինամուրապիի (1792-1750) օրէնքները: Ահա այդ օրէնքներից մի քանի յօդուած (յօդուածների ընդհանուր թիւը եղել է 61, բայց նրանցից պահպանուել են միայն 59):

«Եթէ նաւակավարը շրջահայեաց էէ եւ խորտակում է (մի) նաւակը, (ապա) նա պարտաւոր է փոխհատուցել այն ամէնը, ինչ նա խորտակել է»⁸:

«(Այն) մարդը, որ օրը ցերեկով բռնում է (մի) տան մէջ, որը պատկանում է մուշքենումին, պարտաւոր է կշռել (=վճարել) 10 սիկլ (=8.4 գ) արծաթ: Նա, ով կը բռնուի (նոյն) տանը՝ գիշերով, պէտք է մեռնի, նա չպէտք է ապրի»⁹:

«Եթէ, (մի) մարդ (մի այլ) մարդու աղջկայ համար գլխագին է բերում, բայց յետոյ (մէկ) ուրիշը, առանց հարցնելու նրա հօրն ու մօրը, առեւանգում է նրան եւ զրկում կուսութիւնից, (ապա) դա քրէական գործ է, եւ նա պէտք է մեռ-

նի»¹⁰:

Միջազգային օրէնքների համեմատութիւնը Եգիպտոսի օրէնքների հետ ցոյց է տալիս, որ Միջազգային օրէնքները աւելի յստակ են ձեւակերպուած:

գ) Բաբելոն

Հին Արեւելքի ամենայայտնի օրէնքները Խամմուրայի (1792-1750) օրէնքներն են, որոնք բաղկացած են 282 յօդուածից¹¹: Դրանք խիստ կանոնադրուած օրէնքներ են եւ իրենց ձեւերով համարեայ նման են մեր ժամանակների օրէնքներին, թէեւ էութեամբ խիստ դժուար են:

Ահա մի քանի օրինակ:

«Եթէ (որեւէ) մարդ գողացել է աստծոյ կամ տաճարի ունեցուածքը, (այս) այդ մարդը պէտք է մահուան դատաւարտուի, ինչպէս նաեւ նա, որ նրա ձեռքից ընդունել է գողօնը, (նոյնպէս) պէտք է մահուան դատաւարտուի»¹²:

«Եթէ (որեւէ) մարդ (գողութեան նպատակով) մի (ուրիշ մարդու) տան պատը ծակում է, (այս) նրան նոյն ծակի առջեւ սպանում են ու թաղում»¹³:

«Եթէ (որեւէ) մարդու տան մէջ հրդեհ ծագի, իսկ (մի ուրիշ) մարդ, որ գալիս է (հրդեհը) հանգցնելու, (սակայն) իր աչքերը տնկում է տանտիրոջ ունեցուածքի վրայ եւ թոցնում է տանտիրոջ ունեցուածքը, (այս) տանող մարդը պէտք է շարտուի այդ (նոյն) կրակի մէջ»¹⁴:

«Եթէ (որեւէ) մարդու կին յանուն այլ տղամարդու սպանի իր ամուսնուն, (այս) այդ կնոջը պէտք է ցից հանել»¹⁵:

«Եթէ (որեւէ) մարդ կոտորի (մի ուրիշ) մարդու ատամը, (այս) պէտք է կոտորել նրա համապատասխան ատամը»¹⁶:

«Եթէ (որեւէ) մէկի ստրուկը հարուածի որեւէ մէկի որդու երեսին, (այս) պէտք է նրա ականջը կտրել»¹⁷:

դ) Յնդկաստան

Հին Արեւելքի միւս երկրների նման (Ք.ա. II - Ք.յ. II դդ.) Հնդկաստանում եւս մշակուել են համապատասխան օրէնքներ կեանքի տարբեր բնագաւառների վերաբերեալ: Դրանք ժամանակակից օրէնքների նման չեն, այլ, աւելի շուտ, բարեծնունդ հնդկի համար կանոնների ժողովածոյ, որպէսզի նա ճշտագոյնս կատարի իր հասարակական, կրօնական եւ բարոյական պարտքը:

Այդ օրէնքները, որ ուսումնասիրուել ու թարգմանուել են մեզանում մի քանի տասնամեակ առաջ, բաղկացած են 12 գլխից եւ 2685 յօդուածից¹⁸:

Շօշափելի պատկերացում կազմելու համար բերենք մի քանի օրինակ:

«Պէտք է ամէն կերպ խուսափել ուրիշի կամքից կախուած ամէն գործ (կատարելուց), բայց ինչ որ կախուած է սեփական կամքից, պէտք է կատարել խանդաւանութեամբ»¹⁹:

«Պաշարելով թշնամուն՝ պէտք է կանգ առնել եւ ամայացնել նրա երկիրը: պէտք է ամէն ժամանակ ոչնչացնել նրա անասնակերը, մթերքը, ջուրը եւ վառելիքը»²⁰:

«Պէտք է թշնամիներին յաղթել խաղաղ բանակցութիւններով, կաշառքով, պառակտում մտցնելով՝ բոլոր (այս միջոցներով) կամ (իւրաքանչիւրն) առանձին, բայց երբէք՝ պատերազմով»²¹:

«Հաստատ համոզուելով բոլոր (պարտուածների) ցանկութիւնների (անկեղծութեան) մէջ՝ պէտք է գահ բարձրացնել (պարտուած տիրակալի) ազգականին եւ համաձայնութիւն կնքել (նրա հետ)»²²:

«Առաջին գողութեան դէպքում պէտք է հրամայել կտրել գողի երկու մատը, երկրորդ անգամ՝ ձեռքը եւ ոտքը, երրորդ անգամ նա վաստակում է մահուան դատաւճիռ»²³:

ե) Իրան

Իրանի օրէնքների ժողովածոն կոչուում է «Գիրք հազար դատաստանի» («Mâtakdân î hazâr dâstastân»): Դատաստանազիրքը գրուել է մօտաւորապէս 620 թ., այսինքն՝ Խոսրով Բ-ի ժամանակ²⁴:

Իրանական դատաստանագրքի յօդուածները, ի տարբերութիւն Հին Արեւելքի (յատկապէս Օմմերի ու Բաբելոնի) օրէնքների, ճշտ մեծամասնութեամբ յատուկ շարադրուած չեն: Այն մոյնիսկ ինչ-որ չափով պատմողական բնույթ ունի եւ գեղարուեստական բազմաթիւ երեւակումներ: Յատուկ ձեւակերպուած յօդուածները սակաւաթիւ են: Դրանք կարելի է մոյնիսկ մատնանշել վրայ հաշուել: Բերենք դրանցից մի քանի մտք:

«Մեծագոյն յանցագործութեան մէջ մեղադրուողին՝ Հէնց (նրա մեղքով) դատը առաջին (իսկ) պատճառով հետաձգուելու դէպքում անհրաժեշտ է վրաստել»²⁵:

«(Սրբազան) կրակը, (որ) հիմնարկել է (որեւէ) կին, որն ունի ամուսին ու երեխաներ, եւ որը (եթէ) մահացաւ՝ չթողնելով կտակ, անցնում է ոչ թէ երեխաներին, այլ ամուսնու (հովանաւորութեան տակ)»²⁶:

«Աղջիկներից իւրաքանչիւրը (ստանում է) մէկ բաժին, բայց միայն սովորական, իսկ որդիներից իւրաքանչիւրը (նոյնպէս) մէկ բաժին, բայց միայն կրկնակի»²⁷:

«Օտար կնոջ հետ շնանալու համար տուգանք 300 սատեր»²⁸:

Բիաիճակաճ օրէնագիրք

ա) Կարծիքներ

Վերոյիշեալ երկրների՝ Եգիպտոսի, Շումերի, Բաբելոնի, Հնդկաստանի եւ Իրանի օրէնագրքերից բացի, գոյութիւն են ունեցել օրէնագրքեր նաեւ Չինաստանում եւ Ժապոնիայում, Յունաստանում եւ Հռոմում, Հայաստանում եւ Հայկական Կիլիկիայում, սակայն այդ օրէնագրքերի մասին այստեղ խօսելու կարիք չկայ: Մենք յիշատակեցինք դրանցից միայն մի քանիսը ցոյց տալու համար, որ Բիաիճակաճին այդ երկրների շարքում բացառութիւն կազմել չէր կարող: Հաւանաբար, Հաւանաբար, Համաժող օրէնագրքեր, որոնք, սակայն, համահաւասար ձեւով մեզ չեն հասել:

Բիաիճակաճ օրէնքների գոյութեան հնարաւորութեան մասին մեզանում առաջինը ենթադրեց Ալեքսեյ Սուբխասեանը, որն այդ առթիւ հանդէս եկաւ յատուկ ուսումնասիրութեամբ²⁹:

Բիաիճակաճ օրէնքների հնարաւոր գոյութեան մասին խօսել ենք նաեւ մենք եւ սեպագիր աղբիւրներում գրել «ուրարեական հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող տաճարային-արքունական բնոյթի ինչ-որ օրէնագրքի հատուածներից» մէկը³⁰: Իհարկէ, դա միակը չէ, եւ բիաիճակաճ աղբիւրների մանրակրկիտ ուսումնասիրութիւնը ցոյց կը տայ, որ Բիաիճակաճին, իրօք, եղել է Հին Արեւելքի այն երկրներից մէկը, որտեղ գոյութիւն են ունեցել օրէնագրքեր:

բ) Իշխանուհու ծառան աղջիկ է առեւանգում

Կարմիր բլուրից յայտնաբերուած մի կաւէ սալիկէ արձանագրութեան մէջ ստուած է. «Թաթան՝ ծառան իշխանուհու, (մի) աղջիկ առեւանգեց (եւ) ոչ (մի)

(Մուծածիրում), ապա Բիաինելի արքայի թագադրումը եւս կատարուելու էր միեւնոյն քաղաքում՝ Խալդէի տաճարում, որն այնքան պատկերաւոր կերպով նկարագրել է Սարգոն Բ-ը (722-705): Յայտնի է, որ Ք.ա. 714 թ. Սարգոն Բ-ը արշաւում է Ուրարտու եւ վերադարձին յանկարծակի յայտնւում է Արդինէում (Մուծածիրում), կողոպտում պալատն ու Խալդէի հռչակաւոր տաճարի անբաւ հարստութիւնը: Եւ ահա, հէնց այս հատուածում Սարգոն Բ-ը նշում է, որ Ուրարտուի արքայի որդիներին նրան, ով պէտք է տէր դառնայ գահին, ոսկով, արծնթով եւ Մուծածիրի նրա պալատի գանձարանի թանկարժէք իրերով դուրս են բերում Խալդէի առջեւ (իմա՝ Խալդէի արձանի առջեւ), եւ թագաժառանգը մատուցում է իր նուէրները՝ պարարտ եզներ, անթիւ ոչխարներ, որ զոհաբերում են նրա առաջ, ամբողջ քաղաքի համար կազմակերպում են խրախճանք, նրա աստոյ՝ Խալդէի առջեւ նրան պսակում են տիրակալութեան թագով, տալիս են նրան կրելու Ուրարտուի թագաւորութեան մականը, իսկ նրա մարդիկ բացականչում են նրա անունը⁴²:

Մեր կարծիքով, թագադրութեան համանման ծիսակատարութիւն հանդիպում է նաեւ բիաինական աղբիւրներում: Այսպէս, օրինակ, Ռուսա Ա-ի (735-713) երկլեզուեան (բիաինա-ասուրական) արձանագրութեան մէջ արքայի թագադրութեան տարում նկարագրուած է մօտաւորապէս միեւնոյն պատկերը. «Հաստատեցինձ Ուրգանան հայրական գահին բարձր, արքայական [...] (...), երբ կատարեց աստուածներին-առջեւ Ուրգանան՝ տաճարում աստուածների (եւ) առջեւս զոհ: Հէնց-այդ նոյն օրը Խալդէ տիրոջն-իմ տաճարում լեռնային զոհ կատարեցի: (...) ժողովուրդը Արդինէ (քաղաքին) տուեցի: Ժողովուրդը Արդինէ (քաղաքի) հրապարակ

րակ (°) լցուեց» (Išpuineš ԽSardureh̄ ineš e ale: ԽMinuaše Išpuineh̄ineše ԽHaldine bedušane qabqariline, e>a DINGIRMES UKKINMES, III GUD XXX UDU ui[e] [Hr]šū lakune)⁴³:

Ինչպէս տեսնում ենք, Բիաինելի արքայի թագադրութեան վերաբերեալ այս երկու վկայութիւնները, իւրովի հետաքրքիր ու արժէքաւոր լինելուց բացի, լրացնում են միմեանց՝ ընդ որում, յուշելով նաեւ, որ նման ծիսակատարութիւնը ււանդոյթի էր վերածուել, օրէնքի ուժ ունէր եւ, անշուշտ, բիաինական օրէնսգրքի մաս էր կազմում:

զ) Չոհաբերութեան կարգը

Յայտնի է, որ Հին Արեւելքի երկրներում տաճարներն ունէին տնտեսութիւն, անասունների նախիրներ կամ ոչխարի հօտեր: Տաճարի նախիրներն ու հօտերը համարուում էին անձեռնմխելի, սակայն, անհրաժեշտութեան դէպքում, օրէնքի սահմաններում, համապատասխան ձեւով այդ անասունները հեթանոսական տօների կապակցութեամբ կարելի էր զոհաբերել եւ զոհի միսն օգտագործել:

Ահա, հէնց այդպիսի փաստի ենք հանդիպում Մինուայի (810-788) արձանագրութիւններից մէկում, որտեղ ասուած է հետեւեալը. «Մինչեւ Խալդէին զոհ կատարելը (=մատուցելը), [մինչեւ] քուրմը (°) տաճարում զոհը սրբագործելը, երբ Խալդէին ձօնում են մատաղ (°), Խալդեան դարպասներում կրակ պէտք-է վառի: Ով մատաղը (°) դէպի-աջ (եւ) դէպի-ձախ (=անխնայ) ուտի, թող-բռնի, թող-զոհի, (միայն թէ) Խալդեան դարպասներում պէտք-է-ուտի: (Որեւէ) քաղաքացի (=բնակիչ, մարդ) երբ գինի (°) գեղի, կանխաւ (=նախապէս) ծանուցմամբ (°) պէտք-է-վերցնի, Խալդեան դարպասներում գինին (°) պէտք-է-սրբագործի: Երբ եզ մորթի, նոյնպէս (°) զոհը

Խալդեան դարպասներում թող-հաստատի, երբ կով (°) մորթի, (նոյնպէս) թող-հաստատի զոհը Խալդեան դարպասներում» (pa-re ԽH̄al-de-i-e ur-bu-a-se za-du-še [pa-re LU'ur-bi-ka-e] E'[BA'R] u[r-bu-a-še a'š-h]a-a'š-te-e-še a-še ԽH̄al-de-i-e a'š-h̄ a-a'š-tu'-le h̄a-lu-le e-gu-de G'UB-de a-tu'-le-i-e de-du-li-ne' uz-bu-li-ne' ԽH̄al-[di]-na KA' KU'-ne' URU-še a-še sa-le me-šu'-le ka-am-ni-ne' ša-na-ni-ne' h̄ a-i-ti-ne' ԽH̄al-di-na KA' s[a-l]e a'š-h̄a-a'š-ti-ti-ne a-še GUD š̄i-i-du-le a-i-ne' ur-bu-a-be ԽH̄al-di-na KA' t[a-n]u-li-ne' a-še ni-qa-le š̄i-i-du-le ta-nu-li-ne' [ur]-bu-a-še ԽH̄al-di-na KA')⁴⁴:

Մինուայի արձանագրութեան այս հատուածը, որն ունի աւելի քան 2800 տարուայ հնութիւն, անշուշտ բիաինական օրէնսգրքի գլուխներից մէկի մի մասն է՝ իր տարբեր, իրար լրացնող յօդուածներով:

ե) Բիաինական դիցարանի կարգաւորումը

Իշպուլինէի (825-810) եւ Մինուայի (810-788) համատեղ գահակալութեան տարիներին կարգաւորուեց բիաինական դիցարանի աստուած-աստուածուհիների համար նաեւ տարբեր սրբութիւնների համար նախատեսուած զոհակենդանների քանակն ու կարգը⁴⁵: Այս բոլորն, իհարկէ, կատարուել է ոչ միանգամից: Ամէն ինչ նախապէս ուսումնասիրուել է, ճշտուել, հաստատուել եւ նոր միայն հրապարակուել: «Փաստաթղթի» վրայ հիմնականում աշխատել են Իշպուլինէն եւ թագաժառանգ Մինուան, բայց պէտք է ընդունել նաեւ այն փաստը, որ աշխատանքներն, անշուշտ, մասնակցել է նաեւ Արդինէի (Մուծածիրի) Խալդէի տաճարի քրմայետը, ինչպէս նաեւ այլ համապատասխան անձինք: «Փաստաթղթի» հրապարակումից յետոյ այն համարուել է պետական օրէնք եւ պարտադիր է եղել բո-

լորի համար: Այս աշխատանքներում Մինուայի դերը շատ մեծ է, քանի՜ որ նա ձգտում էր երկիրը տեսնել երեք հզօր հիմքերի վրայ հաստատուած մէկ միասնական ամբողջութիւն: Այդ հիմքերն էին՝ քաղաքական, տնտեսական եւ կրօնական բնագաւառները, եւ անհրաժեշտ էր դրանք մէկ ընդհանուր յայտարարի բերել:

Մհերի դարպասների արձանագրութեան բազմաթիւ հատուածներ կարելի է դիտել որպէս տաճարային օրէնքների առանձին յօդուածներ: Այստեղ նշուած է նաեւ զոհաբերութեան ժամանակը. «(Իշպուլինէն) սահմանեց կարգ- Արեւի ամսին տօնախմբութիւն (°) կատարել (°) Խալդէին, Թեյեբային, Շիւլինէին (եւ) աստուածներին բոլոր» (te-ru ne' ar-di-še ԽUTU ITU a-su-še ma-nu-še ԽH̄al-de-e-i ԽIŠKUR ԽUTU DINGIRMES UKKINMES)⁴⁶:

Այնուհետեւ նշուած է բիաինական դիցարանի աստուած-աստուածուհիներին եւ սրբութիւններին յատկացուող զոհատեսակների տեսակն ու քանակը⁴⁷, որը կանոնների մի ամբողջութիւն է: Այս հատուածին յաջորդում է եւս մի կարգաւորութիւն-օրէնք⁴⁸, որը, սակայն, լիակատար հասկանալի չէ:

Այսպիսով, Մհերի դարպասների արձանագրութիւնը, փաստօրէն, հանդիսանում է կա՛մ անկախ հրահանգ բիաինական դիցարանի վերաբերեալ, կա՛մ բիաինական օրէնսգրքի բաժիններից մէկի՝ տաճարային օրէնքների ամենակարեւոր հատուածներից մէկը, որը հազիւ թէ որեւէ կասկած յարուցի:

ը) Տուգանք օրինազանցութեան համար

Սարգուրէ Բ-ի (764-735) արձանագրութիւններից մէկում նշուած է, որ ինքը խաղողի այգի է հիմնում եւ կարգա-

դրում հետեւեալը. «Խալդեան մեծութեամբ Սարգուրէ Արգիշթորդին այս խաղողուտը հիմնեց: Սարգուրէն ասում է. (Այն) արքան, ով յետոյ հէնց-այդ-նոյն տեղից (=ժամանակից) տիրակալ լինի, թող (...) բազմաթիւ որթերից (չ)վերցնի հաստատուած Սարգուրեան անունը Սարգուրեան խաղողուտի» (D^Haldinine alsuisine D^SSarduriš e ¹Argištehineše ine G^{is}GESTIN (= ulde) terune. D^SSarduriše ale: LUGAL (= ereline) ale ise ikukane edine GAR-ue (= alaue) manule, mi (...) TA'L [= zašane(?)] urtane haidiane terihine D^SSardurinei tine D^SSardurinei tine G^{is}udulei)⁴⁹:

Հէնց այս հանուածին յաջորդող կարգադրութիւնը բացարձակ օրէնքի ուժ ունի: Ահա, թէ ինչ է ասուած այստեղ. «Ով գողանայ (կամ) ձի վարի, թող տայ (մէկ) կանգուն մորթի (եւ) սանձը» (a-[l]u-š e ha-u'-le-e u'-nu' u'-ru-le-e SUM-nine (=arinine) T.KUŠ i-du-še KUŠ.PA)⁵⁰:

Հնարաւոր ենք համարում ենթադրել, որ տուեալ մէջբերումը եւս բիւրեւեակն «արքունական-տաճարային օրէնսգրքի հատուածներից մէկն է՝ օրէնսգրքի, որից միայն հատուկտոր հատուածներ են մեզ հասել»⁵¹:

թ) Ոռոգովի հողամշակման կարգը

Ռուսա Ա-ը (735-713) Վանից արեւելք, Տոնի գիւղում կանգնեցրած կոթողի արձանագրութեան հէնց սկզբում ասում է հետեւեալը. «Հողաշերտը կիտեցի լեռան ստորոտում, դաշտը հեղեղեցի, ուղղեցի ջրերը այնտեղ առուների, (ինչպէս) նաեւ առուակների, դրեցի անունը «Ռուսայի ծով»: Անցկացրի ջրանցք այնտեղից դէպի-Ռուսախինելէ (քաղաքը) հէնց-այդ հովտով, որը չոր (°) էր: Բիացիները փորում-էին հողաշերտը, (ինչպէս) նաեւ լուլուեանները (=բարբարոսները), (որ) իրօք, «շուկե» էր»⁵² ([a]-re u'-e-l[e]-[du-u'-be'] [G^{EN}]ba-ba-ni-[a] KALAGNU. MEŠ U' RA

SILA-be A MEŠ iš-ti-n[e'] [P]i-la-lu'-e e->a i-še-na-a-lu'-l[e] [t]e-ru-be' ti-ne' ¹Ru-[s]a-i-šu-le' [a]-j'u-be' PA₅ iš-ti-ni-ne' ¹Ru-sa -hi-na-[de] [i]l-ku-ka-hi-ne' KI^{TIM} a-le qu-ul-di-[ne'] [ma]-nu KURBi-a-i-na-še BAL TETEM e-[->]a [KUR]KU'R MEŠ. še gu-ne' šu'-le ma-nu)⁵³:

Այնուհետեւ արձանագրութեան մէջ կարգում ենք. «Ռուսան ասում է.՝ երբ Ռուսախինելէ (քաղաքը) կառուցեցի, երբ այս ծովը հիմնեցի, սահմանեցի.՝ Որդին (=կը մշակի) (այսու)հետեւ հողն-իր Ռուսախինելէ (քաղաքի) առջեւ, (եթէ մշակի) նաեւ այսպիսի ծովային տեղը, (որ) իրօք, չոր (°) եւ «շուկե» էր: Որդիներից (=բնակիչներից) ով կը վարի (=կը մշակի) հեռաւոր (=օտար) որդու (=բնակիչի) կորին (=հողակտորը), (մէկ) «դիրէ» պղինձ կը տայ (°) [=կը կշռի (°)] սահմանուած»⁵⁴ (¹Ru-sa-[še] [a]-le i-u' ¹Ru-sa-[hi]-i-ne'-l[e] [š]i-du-u'-le i-u' i-ne' šu-e ta-nu-[be'] [te]-ru-be' LUCDUMU-še URU⁷u-uš-pa-i-ne'-[še] [u'-ru-lu-ne' i-si-i KI^{TIM}]-j`e-e ¹Ru-sa-hi-na ka-i e->a i-nu-s[e] [š]u-i-ne'-i e-se gu-ne' qu-ul-di-[ne'] [šu]-le ma-nu LUCDUMU^{MEŠ}.ne'-še a-lu-še [u]-ru-lu-ne' šu'-i-ne'-i LUCDUMU-[i] [q]u-u'-ra di-re URUDU du-de-e te-ra-[j`e])⁵⁵:

Ինչպէս տեսնում ենք, մէջբերուած հատուածը բաղկացած է երկու առանձին յօդուածից.

ա) Ռուսախինելէ քաղաքի բնակիչը իրաւունք ունի իր տնամերձ հողամասը մշակել այն դէպքում, եթէ նա յանձն առնի մշակել ջրանցքի մերձակայ որեւէ հողակտոր եւս, հակառակ դէպքում տնամերձը կը բռնագրաւուի:

բ) Տուշպա քաղաքի բնակիչը եթէ (վարձակալութեան իրաւունքով) մշակի մէկ այլ բնակչի հողակտորը, ով այն անձամբ մշակելու հնարաւորութիւն չունի, ապա մշակողը պէտք է տայ [=պէտք է կշռի (°)] սահմանուած մէկ «դիրէ»

պղինձը:

Մենք չենք ուզում խորանալ հատուածի նման տառագարձութիւնից բխող մեր առաջարկած թարգմանութեան մանրամասների մէջ, քանի որ այն մեզ շատ հեռուն կը տանի: Տուեալ դէպքում կարելորը միայն մէջբերուած հատուածների ճիշտ տառագարձութիւնը եւ նրանից բխող ճիշտ թարգմանութիւնը է (որը իւրաքանչիւր մասնագէտի համար կարող է յատուկ ուսումնասիրութեան նիւթ դառնալ, Բիախինելի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները ինչ-որ չափով աւելի խորութեամբ քննելու եւ նոր տուեալներ բացայայտելու մղումով): Աւելի կարեւոր է այն, որ վկայուած փաստերն իրօք թոյլ են տալիս համոզուել, որ Բիախինելում Հին Արեւելքի համարեայ բոլոր երկրների նման գոյութիւն է ունեցել արքունական-տաճարային բնոյթի օրէնսգրք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 И. М. Лурие, *Очерки древнеегипетского права XVI-X веков до н. э.*, Ленинград, 1950.
- 2 Նոյն տեղում, էջ 148:
- 3 Նոյն տեղում, էջ 166:
- 4 Նոյն տեղում, էջ 285:
- 5 Նոյն տեղում, էջ 307:
- 6 В. В. Струве, Ф. Г. Редер (редакторы), *Хрестоматия по истории древнего Востока*, 1963, էջ 189:
- 7 Նոյն տեղում:
- 8 Նոյն տեղում, էջ 190:
- 9 Նոյն տեղում, էջ 191: Բարեւակամ հասարակութեան մէջ մուշքեմում էին կոչում երկրի ոչ լիիրաւ քաղաքացիները:
- 10 Նոյն տեղում, էջ 192:
- 11 Նոյն տեղում, էջ 197:
- 12 Նոյն տեղում, էջ 199:
- 13 Նոյն տեղում, էջ 200:
- 14 Նոյն տեղում:
- 15 Նոյն տեղում, էջ 207:
- 16 Նոյն տեղում, էջ 211:
- 17 Նոյն տեղում, էջ 211:
- 18 "Законы Ману", перевод С. Д. Эльманови-

- ча, проверенный Г. Ф. Ильиным, Москва, 1960 (այսուհետեւ՝ ՅՄ):
- 19 ՅՄ, էջ 92 (IV, 159):
 - 20 ՅՄ, էջ 143 (VII, 195):
 - 21 ՅՄ, էջ 143 (VII, 198):
 - 22 ՅՄ, էջ 144 (VII, 202):
 - 23 ՅՄ, էջ 209 (IX, 277):
 - 24 А. Г. Периханян, *Сасанидский судебник*, "Книга тысячи судебных решений", Ереван, 1973, էջ VIII: Աշխատութիւնը չափազանց կարեւոր ներդրում է ինչպէս իրանագիտութեան, այնպէս էլ հայագիտութեան ասպարէզում: Աշխատութեան վերաբերեալ ժամանակին եղել է համապատասխան գրախօսութիւն՝ Н. Арзуманян, *К русскому переводу "Сасанидского судебного"* (ՀՍՍՀ ԳԱ ԼՀԳ, 1980, Յ 8, էջ 74-86): Աշխատութեան անուան յայտարարումը այսուհետեւ՝ ՇՇ:
 - 25 ՇՇ, էջ 43:
 - 26 ՇՇ, էջ 81:
 - 27 ՇՇ, էջ 197:
 - 28 ՇՇ, էջ 219: Նշենք, որ 1 սատերը (ծագում է յուն. στατήρ բառից) հաւասար է սասանեան 4 դրախմայի կամ բարեւակամ տաղանդի 0,003 մասին (բարեւակամ տաղանդը հաւասար է 30,3 կգ), այսինքն՝ ամբողջ տուգանքը կազմում է 1200 սասանեան դրախմա կամ 3,366 կգ արծաթ:
 - 29 А. Г. Сукиасян, *Очерк истории государства и права Биайнили-Урарту (880-590 гг. до н.э.)*, Ереван, 1975:
 - 30 Յ. Յ. Կարապետեան, *Անյայտ գաղափարագրեր յայտնի կորողների վրայ* (ՀՍՍՀ ԳԱ ԼՀԳ, 1976, թիւ 10, էջ 103):
 - 31 УПД, № 4, ուտ 6-10: Տառադարձութեան մէջ կատարել ենք կարեւոր ուղղումներ (Յ. Յ. Կարապետեան, *Անյայտ գաղափարագրեր յայտնի կորողների վրայ*, էջ 87):
 - 32 Д. Ч. Садаев, *История древней Ассирии*, Москва, 1979, էջ 214: Բարեւակամ (անշուշտ մասն Ասորեստանում) 1 սիկըը կշռում էր 8,4 գ, ուստի այդ հաշտով 18 սիկըը կազմում էր 151,2 գ արծաթ:
 - 33 УКН, № 19-27
 - 34 УКН, № 18, տող 1-6, 17-22, 33-38: Տառադարձութեան փոխարէն մտածումով, որ հնարարին չափ մօտեցում է բիախինելի արտասանութեանը, ինչպէս մասն հատուածի թարգմանութիւնը, պատկանում է մեզ: Գեորգի Մելիքիշիլու կատարած թարգմանութեան մէջ (УКН, էջ 124) կան որոշ անճշտութիւններ:
 - 35 HCS, տող 400, АВИИУ, № 49, տող 367f: Նկատենք, որ բիախակամ տուեալ սովորութիւնը

արքայորդիներից որեւէ մէկին քրմապետ նշանակելը, հետագայում հանդիպում է ինչպէս Իրանում (US, 1, էջ 50, 289), այնպէս էլ Հայաստանում, երբ Երուսաղէմի Վերջինի (220-201) կրտսեր եղբայր Երուսաղէմ հանդէս է գալիս որպէս երկրի կենտրոնական սրբավայրի՝ Բագարանի տաճարի քրմապետ (Մովսէս Խորենացի, էջ 175, II, 48):

36 CICH, VII, VIII, IX, X(ՄԿՄ, N° 27, տող 25-26, 79-83; HChI, N° 10, IV-V, XII-XIII): Տառադարձութեան փոխարէն տալիս ենք կապակցուած տեքստ, որտեղ կատարել ենք որոշ ուղղումներ: Թարգմանութիւնը մերն է (ՈւՍ, N° 6, էջ 46):

37 HCS, տող 269-379, АВИИУ, N° 49, տող 269f:

38 Նոյն տեղում:

39 Նոյն տեղում:

40 Նման երևոյթ հետագայում հանդիպում է նաև Արշակունի արքայադուհի տիրապետութեան ժամանակ, երբ արքայից եւ թագածառանգից բացի, միւս արքայորդիներից կամ արքայի եղբորորդիներից որեւէ մէկը իրաւունք չունէր բնակուելու կամ առանց թոյլտուութեան յայտնուելու Հայաստանի կենտրոնական մասին գում՝ Այրարատում: Զանցատուները դատաւարտում էին մահուան, ինչպէս դա կատարուեց Արշակ Բ-ի (350-368) եղբորորդի Գնէլի հետ, որը սպանուեց Ժահապիվանում: Արշակունիների ժամանակ արքայորդիները բնակուում էին իրենց յատկացուած որոշ գաւառներում՝ Այրարատից հեռու: Սակայն այլ էր վիճակը Հին Արեւելքի որոշ երկրներում, ինչպէս նաև անելի ուշ շրջանում, ասենք, Իրանում, որտեղ թագածառանգը արքայանալու հետ միաժամանակ պատահում էր, որ ոչնչացնում էր իր բոլոր եղբայրներին՝ վախենալով նրանց ինչպէս կենտրոնախոյս ձգտումներից, այնպէս էլ գահին տիրելու նրանց բացարձակ կամ գաղտնի մտադրութիւններից:

41 HCS, տող 125-155, АВИИУ, N° 49, տող 125f:

42 HCS, տող 339-345, АВИИУ, N° 49, տող 309f: Այս կապակցութեամբ կարելու է Լէոնիդ Բիագովի աշխատանքը (Լ. Ն. Բիագով, Ուրարտական արքաների թագադրման արարողութեան մասին, էջ 24-27):

43 ՄԿՄ, N° 264, ԿՄ, տող 10-14, 21-23: Մէջբերուած հատուածի տառադարձութեան մէջ կատարել ենք լուրջ ուղղումներ: Բերել ենք մեր թարգմանութիւնը (ՈւՍ, N° 28, էջ 83), քանի որ Գեորգի Մելիքիշիլու առաջարկած թարգմանութիւնը (ՄԿՄ, էջ 325), յենուած լինելով ոչ լրիւ ճշգրիտ տառադարձութեան վրայ, բնականաբար, նոյնպէս ճշգրիտ լինել չէր կարող: Հատուածի «Արդիւն (քաղաքին) տուեցի» նախադասութիւնը նշանակում է, որ գոհաբերուած անասունները բաժանուել են Արդիւն քաղաքի բնակիչներին, իսկ «Ժողովուրդը Արդիւն (քա-

ղաքի) հրապարակ (» լցուեց» արտայայտութիւնը նշանակում է, որ Ռուսա Ա-ի թագադրութեան կապակցութեամբ Արդիւն քաղաքի բնակիչները տօնախմբութիւն են կատարել:

44 ՄԿՄ, XXV (ՄԿՄ, N° 96, տող 1-7 =HChI, N° 76), Տառադարձութեան մէջ կատարել ենք բազմաթիւ ուղղումներ: Բերել ենք մեր թարգմանութիւնը: Հատուածի վերաբերեալ Գեորգի Մելիքիշիլու մօտ կայ միայն մի քանի դիտողութիւն, իսկ թարգմանութեան վերաբերեալ ասում է հետեւեալը. «Արձանագրութեան կապակցուած թարգմանութիւն տալը չափազանց դժուար է մի շարք բառերի, ինչպէս նաև քերականական ձեւերի անհասկանալիութեան պատճառով» (ՄԿՄ, էջ 196): Վիճակն անելի վատ է Ֆրիդրիխ Քեօնիգի մօտ: Իրօք, Դեակոնովը «դէպի-աջ (եւ) դէպի-ձախ» արտայայտութիւնը (ընդ որում, e-gu-de ձեւի փոխարէն նա միայն դնում է gu-di, որ ճիշտ չէ) թարգմանում է «աջ (ու) ձախ», այսինքն՝ «հարեանաբար» (СГО, էջ 407): Անելի ուշ նոյն արտայայտութիւնը նա թարգմանում է՝ «աջ (ու) ձախ» կամ «աջից ու ձախից», բառացի՝ «դէպի աջից (եւ) դէպի ձախից» (УПД, էջ 48), ինչպէս նաև՝ «աջից (կամ) ձախից» (այսինքն՝ հարեանաբար), համարեայ նախկին թարգմանութեան նման (И. М. Дьяконов, О некоторых направлениях в урартском языкознании и новых урартских текстах, "Древний Восток", 5, Ереван, 1988, էջ 147), որը ճիշտ պատկերացում չի տալիս «աջ (ու) ձախ» (իմա՝ «անխնայ») արտայայտութեան մասին: Փաստօրէն, Բիախնական լեզուամտածողութեան այս ձեւը պահպանուած է հայերէնում:

45 MLVE, XVII = CICH, VII-X (ՄԿՄ, N° 27 = HChI, N° 10):

46 ՄԿՄ, N° 27, տող 2-3 = HChI, N° 10, I: Տառադարձութեան մէջ կատարել ենք աննշան ճշտումներ: Բերել ենք մեր թարգմանութիւնը, որտեղ կամ կարելու ուղղումներ (ՈւՍ, էջ 45):

47 ՄԿՄ, N° 27, տող 3-23 = HChI, N° 10, II:

48 ՄԿՄ, N° 27, տող 29-31 = HChI, N° 10, VIII:

49 MLVE, XL (ՄԿՄ, N° 167, տող 1-7 =HChI, N° 110, I-II): Տառադարձութեան մէջ կատարել ենք որոշ ուղղումներ եւ վանկագրի փոխարէն օգտագործել լատինական հնչիւնային համակարգը: Տառադարձութեան մէջ նկատի ենք ունեցել նաև Իգոր Դեակոնովի որոշ կարելու ուղղումները (УПД, էջ 67): Բերել ենք մեր թարգմանութիւնը (ՈւՍ, N° 26, էջ 72), քանի որ Գեորգի Մելիքիշիլու մօտ այն տրուած է բացթողումներով (ՄԿՄ, էջ 313):

50 ՄԿՄ, N° 167, տող 8-9 = HChI, N° 110, II): Տառադարձութեան մէջ կատարել ենք կարելու ուղղումներ (Յ. Յ. Կարազեղեան, Անյայտ գաղափարագրեր յայտնի կոթողների վրայ, էջ 99),

նկատի ենք ունեցել նաև Իգոր Դեակոնովի ընթերցումները (СГО, էջ 413-414): Բերում ենք մեր թարգմանութիւնը (Յ. Յ. Կարազեղեան, Անյայտ գաղափարագրեր յայտնի կոթողների վրայ, էջ 103, ՈւՍ, 3 26, էջ 72):

51 ՈւՍ, N° 26, ծմբ. 1 (էջ 72-73):

52 ՈւՍ, N° 31 (էջ 86): Բերել ենք մեր թարգմանութիւնը: Գեորգի Մելիքիշիլու մօտ ամբողջ արձանագրութիւնը կապակցուած թարգմանութիւն չունի (ՄԿՄ, էջ 332): Անբաւարար է նաև Ֆրիդրիխ Քեօնիգի տուած թարգմանութիւնը (HChI, էջ 144): Մեր թարգմանութիւնը յենուած է արձանագրութեան տուեալ եւ յաջորդ հատուածների յատուկ ուսումնասիրութեան վրայ (Յ. Յ. Կարազեղեան՝ 1) Անյայտ գաղափարագրեր յայտնի կոթողների վրայ, էջ 104-105. 2) Ուրարտական նորայայտ գաղափարագրեր, էջ 65-67):

53 Բերում ենք մեր թարգմանութիւնը (Յ. Յ. Կարազեղեան՝ 1) Անյայտ գաղափարագրեր յայտնի կոթողների վրայ, էջ 109. 2) Ուրարտական նորայայտ գաղափարագրեր, էջ 67): Գեորգի Մելիքիշիլու եւ Ֆրիդրիխ Քեօնիգի առաջարկած տառադարձութիւնները (ՄԿՄ, էջ 268, տող 1-8, HChI, 3 121, I) անբաւարար են: Անբաւարար է նաև Իգոր Դեակոնովի տառադարձութիւնը (И. М. Дьяконов, Заметки по урартской эпиграфике, "Эпиграфика Востока", IV, Моск-

ва-Ленинград, 1951, էջ 112):

54 ՈւՍ, N° 31 (էջ 86): Բերել ենք մեր թարգմանութիւնը: Գեորգի Մելիքիշիլու մօտ ամբողջ արձանագրութիւնը կապակցուած թարգմանութիւն չունի (ՄԿՄ, էջ 332): Ֆրիդրիխ Քեօնիգի թարգմանութիւնը (HChI, էջ 144) նոյնպէս անյաջող է:

55 ՄԿՄ, N° 268, տող 8-17 = HChI, N° 121, II: Տառադարձութեան մէջ կատարել ենք որոշ կարելու ուղղումներ: Իսկ ինչ վերաբերում է Իգոր Դեակոնովի ինչպէս սոյն, այնպէս էլ նախորդ հատուածի տառադարձութեան ու թարգմանութեանը (И. М. Дьяконов, Некоторые данные о социальном устройстве Урарту, "Проблемы социально-экономической истории Древнего мира", Москва-Ленинград, 1963, էջ 60-61 եւ ծմբ. 28), ապա կարելի է ասել, որ բազմաթիւ բառերի ճիշտ տառադարձութեան եւ թարգմանութեան հետ միաժամանակ կամ բազմաթիւ ոչ ճիշտ տառադարձութիւններ եւ թարգմանութիւններ: Հատուածի [q]u-u'-ra բառը, թերեւս, պահպանուած է հայերէնում. qura>կորէ>կորի, որը չի ստուգարանուած (ՀԱԲ, II, էջ 648): Համընթիւ բարբառում կորի(ձ) նշանակում է թէն ածու, թէն «մէկ քառորդ օրավար հող»: Ուստի qura>կորի բառը մենք թարգմանել ենք «հողակտոր»: